ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ-ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1915–1930 թթ.)

ԱՍՅԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Առաջին աշխարհամարտի տարիներին և դրանից հետո Մերձավոր Արևելքում միլիոնավոր կարիքավորներին փրկելու և նրանց ապրելու հնարավորություն ընձեռելու համար ստեղծվեց Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն[1] *(հետայսու՝ Ամերիկյան նպաստամատույց), որը 1919 թ. օգոստոսի 6-ին ԱՄՆ Կոնգրեսի հատուկ ակտով վերանվանվեց Մերձավոր Արևելքի նպաստամատույցի* (Near East Relief)[2] *և*

[1] *1915 թ. սեպտեմբերին ԱՄՆ-ում ստեղծվեց Հայկական նպաստամատույց կոմիտե* ("Armenian Relief Committee") *՝ հայերի համար օգնության միջոցներ հայթայթելու և դրամահավաք կազմակերպելու նպատակով: Կոմիտեի նախագահ նշանակվեց Ջեյմս Բարտոնը (Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի արտաքին գործերի քարտուղար), գանձապահ՝ Չարլզ Քրեյնը (Կ.Պոլսի կանանց քոլեջի Խնամատարների խորհրդի նախագահ), քարտուղար՝ Սեմուել Դատոնը (Կ.Պոլսի կանանց քոլեջի գանձապահն ու Համաշխարհային խաղաղության հիմնադրամի քարտուղար): Մինչ հայկական շրջաններին օգնություն տրամադրելը, դեռևս 1914 թ. ամերիկացիների կողմից հիմնվել էր Սիրիայի և Պաղեստինի նպաստամատույց կոմիտեն* ("Syria – Palestine Relief Committee"), *որը կազմակերպում էր հանգանակություններ և գումար ու սնունդ տրամադրում Սիրիայի բնակչությանը: Նման ևս մի կոմիտե՝ Պարսկաստանի պատերազմական նպաստի հիմնադրամը* ("Persia War Relief Fund"), *կազմավորվել էր 1915 թ. սկզբներին՝ թուրք-քրդական ավերիչ հարձակումներից հետո: 1915 թ. նոյեմբերի վերջին երկու կոմիտեները միավորվելով Հայկական նպաստամատույց կոմիտեին, ձևավորեցին Հայ-սիրիական ամերիկյան նպաստամատույց կոմիտեն* ("American Committee for Armenian and Syrian Relief"), *որի անձնակազմը և ղեկավար մարմինները մնացին նույնը, ինչ Հայկական կոմիտեում: Գործունեության երրորդ տարում՝ 1918 թ., այն արդեն կրում էր Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտե* ("American Near East Relief Committee") *անվանումը: Այս մասին ավելի մանրամասն տես՝* J. L. B a r t o n. Story of Near East Relief (1915–1930). An Interpretation, New York, 1930, pp. 4, 14; R. L. D a n i e l. American Philanthropy in the Near East 1820–1960, Athens, 1970, pp. 150, 154; *Լ. Ա զ ա տ յ ա ն. Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս Անճելոս, 1995, էջ 157, Ս. Ռ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմի) գործունեությունը Հայաստանում 1918–1930 թթ., Երևան, 2009:*

[2] J. L. B a r t o n. *Նշվ. աշխ., էջ 431: Հաճախ Ամերիկյան նպաստամատույցի հետ համագործակցում էին նաև ամերիկյան միսիոներները, ովքեր, արդեն իսկ գտնվելով Մերձավոր Արևելքում, կարող էին աջակցել իրականացվող լայնածավալ մարդասիրական աշխատան-քին: Սակայն ի տարբերություն տարածաշրջանում գործող այլ կազմակերպությունների, ինչպիսին, օրինակ, Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդն էր, որոնք գործում էին «Աստծո խոսքը» տեղի ժողովուրդների շրջանում տարածելու առաջնային նպատակով, Ամերիկյան նպաստամատույցը ոչ միսիոներական, ոչ քարոզչական կազմակերպություն էր, որի նպատակները հստակ սահմանված էին նրա կանոնադրության մեջ: Ուստիվ, հոդվածում չենք անդրադառնում ամերիկյան միսիոներական շարժման պատմությանը, միսիոներական կազմակերպությունների գործունեությանն ու նպատակներին:*

Ինչ վերաբերում է Ամերիկյան նպաստամատույցի հետ համագործակցող միսիոներների հետախուզական կամ լրտեսական գործունեությանը, որին առավել շատ անդրադառնում էին խորհրդային շրջանում գրվող աշխատություններում, ապա խորհրդային պետական անվտանգության

ստացավ տասնամյա գործունեության օժանդակություն: Ըստ նույն օրն ընդունված կանոնադրության՝ Ամերիկյան նպաստամատույցի նպատակն էր. «Մերձավոր Արևելքի և հարակից շրջանների տուժածների և կարիքավորների համար մարդասիրական օգնություն ապահովել և աջակցել նրանց հայրենադարձությանը, վերաբնակեցմանը և վերահաստատմանը, ինչպես նաև ապահովել որբերի և այրիների խնամքը…»[3]: Նպաստամատույց կոմիտեի աշխատակիցները լայնածավալ քարոզչական գործունեություն ծավալեցին ԱՄՆ-ում, ինչի արդյունքում հնարավոր դարձավ խոշոր հանգանակություններ իրականացնել: Քարոզչությունը տարվում էր մի քանի հիմնական ուղղություններով.

ա. հանրությանն ուղղված առանձին անհատների ելույթների, կոչերի և բանախոսությունների միջոցով,

բ. պարբերականների և թերթերի միջոցով,

գ. քարոզչական պաստառների, նամականիշերի և շարժանկարների միջոցով,

դ. «Ոսկի կանոնի» կիրակիների կազմակերպմամբ:

Ամերիկյան նպաստամատույցի անդամները ճամփորդում էին Միացյալ Նահանգներով և հանդիպում տեղի գործարար ու կառավարական շրջանակների, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչների հետ: Քարոզչական նպատակներով տեղեկատվություն էր տարածվում հասարակության բոլոր շերտերի շրջանում: Դա արվում էր մի քանի ուղղությամբ. մեծահարուստ անհատներին ուղղված դիմումների, համայնքներում կազմակերպվող բանախոսությունների միջոցով, եկեղեցիներում ու կիրակնօրյա դպրոցներում իրականացվող միջոցառումների և այլ եղանակներով:

ԱՄՆ-ում հանգանակությունների կազմակերպմանն իրենց աջակցությունը ցույց տվեցին նաև իշխանության մարմինները՝ սկսած նախագահից մինչև գրեթե բոլոր նահանգների ղեկավարները: Նրանցից շատերը հատուկ կոչերով հանդես էին գալիս հանրության առաջ և խրախուսում միջոցառումների իրականացումը:

Նման քայլ էր Վուդրո Վիլսոնի՝ 1916 թ. հուլիսի 10-ի ԱՄՆ Կոնգրեսի որոշման հիման վրա ընդունված հռչակագիրը: Նախագահ Վիլսոնին առաջարկվել էր սահմանել հատուկ օր՝ հալածվող հայ և սիրիացի ժողովուրդների (սիրիացի անվան տակ հիմնականում հանդես էին գալիս ասորիները , որոնք ընդգրկված էին կրոնական տարբեր համայքներում՝ ուղղափառ, բողոքական, կաթոլիկ և այլն) օգնության գործում ԱՄՆ-ի

մարմիններին չհաջողվեց բացահայտել ամերիկյան աշխատակիցների կողմից որևէ դեպք, որով կապացուցվեր նրանց կողմից լրտեսության որևէ գործունեություն: Սա չի բացառում այդ աշխատակիցներից որևէ մեկի պատկանելությունը հետախուզական ծառայությանը, սակայն ուղղակի փաստերը բացակայում են: Վ. Տերոյանի «Իմպերիալիստական ծիծեռնակներ. Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում» (Երևան, 2008) աշխատությունը, որը գրվել է խորհրդային իշխանությունների հանձնարարությամբ, վերն ասվածի վառ ապացույցն է (այս մասին մանրամասն տե՛ս Ռ. Սահակյան. Առաջաբան.– նույն տեղում, էջ 19–20, 21): Չնայած իշխանությունների կողմից տրված հստակ հրահանգների՝ Վ. Տերոյանի ուսումնասիրությունը, այնուամենայնիվ, ներկայացնում է Ամերիկյան նպաստամատույցի կողմից իրականացված հսկայածավալ մարդասիրական աշխատանքը:

[3] http://www.armenian-genocide.org/Affirmation.228/current_category.7/affirmation_detail.html

քաղաքացիների ներդրումը կազմակերպելու նպատակով: Սույն հռչակագրով 1916 թ. հոկտեմբերի 21-ը (շաբաթ) և 22-ը (կիրակի) հայտարարվեցին հանգանակություն իրականացնելու օրեր[4]: Նախագահի հռչակագրի տեքստի շարադրման գործը ևս ստանձնեցին Ամերիկյան նպաստամատույցի անդամները: Համոզվելով այս նախաձեռնության արդյունավետության մեջ՝ նման միջոցառում կազմակերպվեց նաև հաջորդ տարի:

1917 թ. հոկտեմբերի 29-ին նախագահ Վ. Վիլսոնը հանդես եկավ ամերիկացիներին ուղղված կոչով, որում հորդորում էր Միացյալ Նահանգների բնակչությանը՝ նախորդ տարվա օրինակով շարունակել նվիրատվությունները՝ տառապյալ ժողովուրդներին օգնելու համար: Նշվում էր, որ ամերիկյան ներկայացուցիչների զեկույցների համաձայն Մերձավոր Արևելքում միայն որբերի թիվն անցնում էր 400.000-ը և քանի որ վիճակը գնալով վատթարանում էր, կրկին հրատապ օգնության կարիք էր զգացվում[5]:

Քարոզարշավի իրականացմանն իրենց աջակցությունը ցուցաբերեցին նաև հայտնի դերասաններ, մարզիկներ: Ծագումով շոտլանդացի հայտնի կատակերգակ, երգիչ ու դերասան Հ. Լոուդերը ևս միացավ Մերձավոր Արևելքում աղետալի վիճակում գտնվող հայերին օգնելու քարոզարշավին[6]: Ու. Չերչիլը Լոուդերի մասին ասել է. «Նա Շոտլանդիայի մինչ այժմ ունեցած լավագույն դեսպանն է»[7]: Լոուդերը մասնակցեց ԱՄՆ-ի արևմտյան նահանգներում Ամերիկյան նպաստամատույցի ներկայացուցիչների կոնֆերանսին, ելույթ ունեցավ և ամերիկացիներին ու կանադացիներին կոչ արեց օգնություն ցույց տալ հայերին. «Մենք պատասխանատու ենք մեր չարածների համար: Հայերն անցել են դաժան կտտանքների միջով և այժմ մեզանից օգնություն են խնդրում: Միակ բանը, որ կարող ենք անել՝ օգնելն է. եկեք անենք դա»[8]: Այս ելույթում կանադացիներին ուղղված կոչը պատահական չէր: Կանադան ի սկզբանե միացել էր Ամերիկյան նպաստամատույցի գործունեությանը՝ աշխատակիցներ ուղարկելով Մերձավոր Արևելք: Կանադական եկեղեցիները, կիրակնօրյա դպրոցները և մամուլը համագործակցում էին ճիշտ այնպես, ինչպես ԱՄՆ-ում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ամերիկյան նպաստամատույցը մասնաճյուղեր ստեղծեց Անգլիայում, ինչպես նաև գործակալություններ՝ չեզոք երկրներում, իսկ պատերազմից հետո գրասենյակներ

---

[4] J. L. B a r t o n. *Նշվ. աշխ., էջ 382:*

[5] *Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ (այսուհետև՝ ՀՑԹԻ), գիտական ֆոնդեր, բ. 13, թղթ. 232, -1079:*

[6] *Սեր Հենրի Լոուդերը (բեմական անունը՝ Հարրի Լոուդեր) համարվում էր ժամանակի ամենաբարձր վարձատրվող դերասաններից մեկը և առաջին բրիտանացի կատարողն էր, որն ավելի քան մեկ միլիոն ձայնագրություն էր վաճառել: Լոուդերը Մեծ Բրիտանիայի թագավոր Էդուարդ VII-ի սիրելի դերասանն էր և միաժամանակ հայտնի թեյի մագնատ Թոմաս Լիպտոնի լավագույն ընկերներից մեկը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նա ակտիվ մասնակցում է բարեգործական բազմաթիվ միջոցառումների և հանգանակություններ կազմակերպում աշխարհի բոլոր անկյուններում:*

[7] *Տե՛ս* G. L a u d e r - F r o s t. Biographical Notes on Sir Harry Lauder, http://www.electricscotland.com/webclans/htol/lauder3.htm

[8] The New Near East, published by the Near East Relief, ed. by A. V. Williams, Vol. IV, № 7, February, 1920, New York, p. 22.

բացեց Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, Կորեայում, Ճապոնիայում և Հարավային Ամերիկայում[9]:

1916 թ. աշնանը կոմիտեին փոխանցվեց հայտնի Հարվարդ-Յել ֆուտբոլային խաղի հասույթը[10]: Այս խաղը ամերիկյան համալսարանային ամենահայտնի և հին խաղերից մեկն է համարվում, իսկ մրցակիցները Հարվարդի և Յելի համալսարանների ֆուտբոլային թիմերն էին:

Ռադիոկայանները ևս պարբերաբար տեղեկացնում էին ամերիկացիներին տարբեր հանգանակությունների, միջոցառումների, «Ոսկի կանոնի» կիրակիների կազմակերպման մասին: Որոշ դեպքերում հրավիրվում էին հատուկ հյուրեր, ովքեր ներկայացնում էին Մերձավոր Արևելքում տիրող իրադրությունը և օգնության անհրաժեշտությունը: Այսպես՝ Հարոլդ Էդուարդ Գրեյնջը կամ «Կարմիր» Գրեյնջը (“Red” Grange)՝ ամերիկյան հայտնի ֆուտբոլիստը, որին հաճախ անվանում են բոլոր ժամանակների լավագույն ֆուտբոլիստ[11], մասնակցեց նման մի հաղորդման ու անդրադարձավ Մերձավոր Արևելքի որբերին օգնություն տրամադրելու անհրաժեշտությանը: Հաղորդման վերջում հայտնի ֆուտբոլիստը նշեց, որ ռադիոկայան էր հրավիրվել Ամերիկյան նպաստամատույցի կողմից և խոստացավ իր հարցազրույցի ձայնագրությունը նվիրել բոլոր ցանկացողներին՝ իր ստորագրությամբ: Այդ հաղորդումից մի քանի օր անց շուրջ 3.000 դիմում ներկայացվեց նպաստամատույցի գրասենյակ. ստացվող ծրարներում միշտ կար որոշակի գումար, և շատերը մեծ քանակությամբ ձայնագրություններ էին խնդրում՝ դպրոցներում տարածելու համար[12]:

Քարոզչության հետաքրքիր մեխանիզմ էր կիրառում լեյտենանտ Բելվին Մայնարդը[13]՝ փորձելով մարդկանց ուշադրությունը գրավել հայ սովյալներին աջակցող քարոզարշավի վրա: Նրան անվանում էին «թռչող քահանա». նա որբերին որդեգրելու իր կոչերը՝ բացիկների տեսքով, տարածում էր օդանավով: Բացիկների վրա գրված էր. «Բարի և առատաձեռն սրտերին՝ ամենուր», իսկ նամակում խնդրում էր որդեգրել Մերձավոր Արևելքի մի որևէ որբի: Քաջալերելու համար նշում էր, որ ինքը հենց այդպես է արել, և որ որդեգրության արժեքն ընդամենն օրական 17 ցենտ է[14]:

Կոմիտեի գործունեության տասնհինգ տարիների ընթացքում զեկույցներն ու բանախոսությունները նպաստամատույց աշխատանքի անբաժան մասն էին: Հաճախ բանախոս էին դառնում տարածաշրջանից վերադարձած միսիոներները, ինչպես Թեոդոր Էլմերը: Վերջինս 1916 թ. հոկտեմբերին

---

[9] J. L. B a r t o n. *Նշվ. աշխ., էջ 395–396:*

[10] S. E. M o r a n i a n. The American Missionaries and the Armenian Question 1915–1927, a dissertation submitted to the Graduate School of the University of Wisconsin-Madison for the degree of Doctor of Philosophy, 1994.

[11] http://www.britannica.com/EBchecked/topic/241642/Red-Grange

[12] C h. V. V i c k r e y. International Golden Rule Sunday. A Handbook, New York, 1926, p. 105.

[13] *Բելվին Մայնարդը ինքնաթիռների միջմայրցամաքային մրցավազքի հաղթողն էր և ակտիվորեն մասնակցում էր ԱՄՆ-ում կազմակերպվող բարեգործական գրեթե բոլոր նախաձեռնություններին: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս* The New York Times, October 19, 1919, p. 1; New York Tribune, November 17, 1919, p. 5.

[14] The New Near East…, Vol. V, № 8, April, 1920, p. 27.

Ամերիկյան նպաստամատույցի անունից եղավ Մերիլենդի, Փենսիլվանիայի և Օհայոյի ինը քաղաքներում: Իր ելույթներում նա բավականին պատկերավոր ներկայացնում էր հայկական ջարդերը և դրանց հետևանքները: Այսպես՝ Էլմերը նշում էր, որ հայերն ավելի դաժան տառապանքներ են տեսել, քան անգամ «ստրկության վաճառված սևամորթները»: Նա կոչ էր անում ամերիկացիներին մի կողմ թողնել «քաղաքական իզոլյացիոնիզմը» և հասկանալ, որ իրենք «ավելի մեծ պատասխանատվություն են կրում Թուրքիայում Աստծո թագավորության բարօրության և շահերի համար, քան որևէ այլ պետություն»[15]:

1916 թ. վերադառնալով Թուրքիայից՝ ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն որոշեց այլևս չշարունակել իր դիվանագիտական գործունեությունն այդ երկրում: Նա սկսեց ելույթներով հանդես գալ ամենատարբեր միջոցառումների և հավաքույթների ժամանակ: Ամերիկյան նպաստամատույցի նախագահ Ջեյմս Բարտոնը Հ. Մորգենթաուի մասին գրում էր, որ վերջինս մասնակցել էր մի հանդիպման, ուր ներկա էին Նյու Յորքի շուրջ 3.000 երևելի քաղաքացիներ: Դեսպանը հանդես էր եկել մի իսկական միսիոներական բանախոսությամբ, իսկ ելույթն ավարտել էր հետևյալ կերպ. «Պատրաստ եղեք Թուրքիայում նոր մեծ գործերի համար»[16]:

Ամերիկյան նպաստամատույցի տարբեր երկրների ներկայացուցիչները ևս հանդես եկան օգնության կոչերով, ինչպես Ժնևում գործող Գ. Բերին, ով 1922 թ. նպաստամատույցի անունից ուղարկված նամակ-կոչում հիշեցնում էր, որ ամերիկացիները 1915 թ. 60.000.000 ԱՄՆ դոլար[17] էին հանգանակել: Ապա ավելացնում էր. «Մերձավոր Արևելքի աղետը հաղթահարելու համար օգնություն է անհրաժեշտ ցանկացած տեղից: Տարեկան ընդամենը 60 դոլարը, կամ ամսեկան 5 դոլարը, կարող է փրկել Մերձավոր Արևելքում մի երեխայի կյանք»[18]:

Միացյալ Նահանգների գրեթե բոլոր պարբերականները, շաբաթաթերթերը և օրաթերթերը համագործակցում էին Ամերիկյան նպաստամատույցի հետ:

Դեռ 1915 թ. սեպտեմբերին Ջ. Բարտոնը հատուկ թույլտվություն ստացավ՝ ազատ ուսումնասիրելու Պետդեպարտամենտում պահվող փաստաթղթերը, որոնք ինչ-որ կերպ կարող էին օգնել նպաստամատույց աշխատանքների արդյունավետ իրականացմանը: Այդ փաստաթղթերն ամենայն լրջությամբ ուսումնասիրելուց հետո, նա մեկնեց Նյու Յորք, պատրաստեց բոլոր անհրաժեշտ նյութերի՝ հեռագրերի ու զեկույցների պատճենները և ուղարկեց դրանք տարբեր խմբագրություններ: Որոշ ժամանակ անց այդ տեղեկատվությունը պարունակող հոդվածները տեղ գտան հայտնի պարբերականների և թերթերի առաջին էջերում: Տասնյակից ավելի ամերիկյան պարբերականներ գրեցին հայերի մասին՝ ներառյալ “The Outlook”, “The

[15] S. E. M o r a n i a n. *Նշվ. աշխ., էջ 227:*

[16] *Նույն տեղում:*

[17] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 430, ց. 1, գ. 1276, թ. 15:*

[18] *նույն տեղում:*

American Review of Reviews", "National Geographic", "The Independent", "The Literary Digest", "The World's Work" *ամսագրերը*[19]*:*

"The New Near East" ամսագիրը, որը թողարկվում էր հենց Ամերիկյան նպաստամատույցի կողմից, յուրաքանչյուր համարում ներառում էր Մերձավոր Արևելքի աշխատակիցներից ստացվող տեղեկատվություն և այդպիսով է՛լ ավելի քաջալերում ամերիկացիներին՝ մասնակցելու դրամահավաքներին և նման այլ միջոցառումների: 1920 թ. փետրվարյան համարում ներկայացվում էր Սվազի (Սեբաստիա) հայ որբերի կյանքից մի դրվագ. «Իրենց կյանքում առաջին անգամ մեր որբանոցի երեխաներն ուրախ անցկացրին Սուրբ Ծննդյան տոները: Շատ փոքրերը իրենց ավագ ընկերների կողմից պատրաստված խաղալիքներ նվեր ստացան»: Նշվում էր նաև, որ միևնույն ժամանակ հարյուրավոր անօթևան երեխաներ թե՛ Սվազում, թե՛ շրջակա գյուղերում այդ օրն անցկացրին տեղահանությունից մնացած ցնցոտիներով, դրսում, անօթևան. «Մի պատառ հաց. սա է այն ամենը, ինչ կարող է այժմ տալ նրանց Մերձավոր Արևելքի նպաստամատույցը: Հատկացվող գումարների աճը մեզ հնարավորություն կտա օգնել այս երեխաների և այրիների մեծ մասին և փրկել հարյուրավոր երիտասարդ աղջիկների» (թուրք-քրդական գերության մեջ գտնվող – Ա. Դ.*)*[20]*:*

Ամերիկյան բոլոր հայտնի թերթերը ևս մանրամասն լուսաբանում էին Մերձավոր Արևելքում տիրող աղետալի վիճակը: Միայն 1915 թ. ընթացքում "The New York Times" *թերթում հայերի դրությունը ներկայացնող 146 նյութ տեղադրվեց*[21]*:*

Այս քարոզարշավին միացավ նաև կանադական "The Globe" *թերթը, որի խմբագիր և տնօրեն Ռոբերտ Ջեֆրին, ծանոթանալով Մերձավոր Արևելքի վերաբերյալ պատվելի Ա. Վ. Փիրսի հոդվածներին, եկել էր այն համոզման, որ պետք է իր մասնակցությունն ունենար արշավին: Նա առաջարկեց թերթի միջոցով կազմակերպել 100.000 դոլարի հանգանակություն:* "The Globe"*-ը մի սյունակ հատկացրեց այդ քարոզչության համար և անընդհատ զեկուցեց արված ներդրումների մասին: Չորս շաբաթվա ընթացքում կամավոր ներդրումների արդյունքում հավաքվեց շուրջ 250.000 դոլար գումար*[22]*:*

Քարոզչության ընթացքում Ամերիկյան նպաստամատույցը կիրառում էր նաև պաստառներ՝ թերթերի և ամսագրերի հետ միաժամանակ: Ամեն տարի քարոզչության համար ընտրվում էր մի պատմություն և ներկայացվում ամենապարզ տարբերակով՝ տեսանելի պաստառների օգնությամբ: Նկարները և կարգախոսները փոփոխվում էին Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակի հետ համատեղ: Օրինակ՝ զինադադարից հետո պաստառը ներկայացնում էր անօթևան գաղթականների դրությունը. պատկերվում

[19] The Armenian Genocide – First 20th Century Holocaust, ed. by R. D. Kloian, California, 1980.
[20] The New Near East, Vol. IV, № 7, February, 1920, p. 11.
[21] The Armenian Genocide…, pp. 7–119.
[22] The New Near East, Vol. V, № 7, March, 1920, p. 25.

էր լքվածություն և անօգնական վիճակ ներկայացնող մի տեսարան՝ «Սովը զինադադար չի ճանաչում» խորագրով[23]*:*

1918 թ. դեկտեմբերին լույս տեսած "News Bulletin"*-ում Ամերիկյան նպաստամատույցի և ամերիկյան գործարարների, ինչպես նաև մամուլի հետ համագործակցության մի քանի օրինակներ կային: Այսպես՝ նպաստամատույցը 24 մեծ պաստառներ էր ուղարկել այն ընկերություններին, որոնք զբաղվում էին ԱՄՆ-ի ողջ տարածքում գովազդային վահանակների պատրաստմամբ: Այդ բոլոր պաստառները փակցվել էին անվճար: Այնտեղ նշվում էր նաև մեքենաների վրա գովազդների տեղադրման մասին. «Բարոն Քոլիերը, որը վերահսկում էր երկրի մեքենաների վրա տեղադրվող գովազդների գործը, կոմիտեի պաստառների համար տեղ էր տրամադրել իր բոլոր մեքենաների վրա»*[24]*: Մեկ այլ տարբերակ. ամերիկյան* "Railway Express" *ընկերությունը հնարավորություն էր ընձեռել փակցնել պաստառները բոլոր վագոնների վրա*[25]*: Գոյություն ունեին նաև առանձին պաստառներ, որոնք տրամադրվում էին առևտրականներին և արհեստավորներին՝ իրենց աշխատավայրերում փակցնելու համար:*

Նպաստամատույցի պաստառներից մեկում կրկին օգնության կոչ էր արվում՝ միաժամանակ ներկայացնելով տեղի իրադրությունը: Պաստառի վրա գրված էր. «Միլիոնավոր սովյալներ. 400.000 որբեր. ամսական 5 դոլարը մեկ կյանք է փրկում, որքա՞ն եք պատրաստ տրամադրել»: Ապա նշվում էր, որ իրավիճակը սրվում է, ձմեռն ավելի է մեծացնում վտանգը, սակայն պատերազմը չի խոչընդոտում Ամերիկյան նպաստամատույցի գործունեությանը և բոլոր նվիրատվությունները հասնում են կարիքավորներին: Պաստառի ստորին հատվածում տրվում է կոմիտեի հասցեն՝ գումարներն ուղարկելու համար[26]*: Մեկ այլ ազդագրում գրված էր, որ 2,5 միլիոն սովյալներ կային, նրանց թվում՝ հայեր, սիրիացիներ, ինչպես կանայք, այնպես էլ երեխաներ: Ապա նշվում էր. «Օրական 17 ցենտը մեկ կյանք կփրկի»: Ներքևում կրկին Ամերիկյան նպաստամատույցի հասցեն էր*[27]*:*

30.000.000 ԱՄՆ դոլարի դրամահավաքի կազմակերպման համար 1918 թ. նպաստամատույցի տասնյակից ավելի պաստառներ էր թողարկել Օսմանյան կայսրությունում ցեղասպանությունը վերապրածներին օգնություն տրամադրելու կոչով: Պաստառներից մեկին գրված էր. «Օգնեք, եթե ոչ՝ կմեռնենք»[28]*, իսկ մյուսին՝ «Մի՛ թողեք մահանան»*[29]*, մեկ այլ պաստառի պատկերված էր մի որբուհի, իսկ նկարի ստորին հատվածում գրված էր. «Երեխան ձեր դռան շեմին»*[30]*:*

---

[23] J. L. Barton. *Նշվ. աշխ., էջ 390:.*
[24] S. E. Moranian. *Նշվ. աշխ., էջ 219:*
[25] *Նույն տեղում:*
[26] *ՀՅԹԻ, բ. 13, թղթ. 232, - 1077:*
[27] *ՀՅԹԻ, - 1080:*
[28] *ՀՅԹԻ, թղթ. 3, ֆհ. 15:*
[29] *ՀՅԹԻ, թղթ. 305, - 1265:*
[30] *ՀՅԹԻ, թղթ. 127, - 613:*

Իր կազմակերպած քարոզարշավի ընթացքում Ամերիկյան նպաստամատույցը նաև թողարկում էր դրոշմանիշեր ու նամականիշեր: Այդ նամականիշերից մեկն ասում էր. «Այս նամականիշը սնունդ է գնում սովյալ հայ երեխայի համար»[31]: Թողարկում էին նաև դրամատուփեր, որոնցից մեկի վրա գրված էր. «Միլիոնի լացը, գաղթական-լքյալ-մահամերձ»[32], իսկ մեկ այլ դրամատուփի վրա, որը պատրաստվել էր հատուկ Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ, մի փոքրիկ հայուհու նկար էր պատկերված և գրված էր. «Ես Շուշանն եմ՝ ձեր փոքրիկ հայ ընկերը: 500.000 տղա և աղջիկ ինձ նման քաղցած են: Դուք չեք թույլ տա, որ մենք սովամահ լինենք, այդպես չէ՞»[33]:

Հին հագուստների հավաքման և հայ լքյալներին փոխանցելու նպատակով ևս - պաստառներ էին թողարկվում Ամերիկյան նպաստամատույցի կողմից: Դրանցից մեկի վրա գրված էր. «Որքան մեծ է ձեր սիրտը, այնքան մեծ կլինի ձեր կապոցը, կիսեք ձեր ավելորդ հագուստը հայերի հետ»[34]: Նման պաստառների վրա նշվում էր նաև այն վայրը, որտեղ պետք է հավաքվեին հագուստի այդ կապոցները. դրանք հիմնականում դպրոցների կամ գրադարանների շրջակայքում էին կազմակերպվում և ապա տեղափոխվում նպաստամատույցի գրասենյակներ: 1922–1928 թթ. նպաստամատույցը հավաքեց և Մերձավոր Արևելք հասցրեց 15.931.320 ֆունտ հին կոշիկ և հագուստ[35]:

"The New Near East" ամսագրի համարներից մեկում զետեղված էր Նյու Ջերսիի Քամդեն շրջանի պաստառներից մեկը, որի վրա խոշոր տառերով գրված էր. «Փրկենք կյանքը ժամանակին»: Մեծ ժամացույցի կենտրոնում պատկերված էր Ամերիկյան նպաստամատույցի աստղը, վրան գրված հանգանակության օրերը՝ մարտի 1-ից 6-ը: Պաստառին գրված էր. «Քաղցը ժամանակ չի ճանաչում, 60 դոլարը մեկ կյանք է փրկում մեկ տարում, հանուն Աստծո և հանուն մարդասիրության»[36]:

Քանի որ պատերազմական տարիներին շատ քիչ լուսանկարներ էին հասնում Մերձավոր Արևելքից ԱՄՆ, այս ուղղությամբ իրականացվող քարոզչությունն ակտիվացավ հատկապես զինադադարից հետո (1918 թ. հոկտեմբերի 30-ից): Կոմիտեն եզակի հնարավորություն էր ընձեռում առանձին լուսանկարիչներին դաշտային աշխատանքներ իրականացնելու համար: Կինոֆիլմեր նկարահանող ընկերությունների ներկայացուցիչները շտապում էին Մերձավոր Արևելք՝ տեղի նպաստամատույց աշխատանքների և երեխաների իրադրության մասին ֆիլմեր նկարահանելու նպատակով՝ հատուկ նպաստամատույցի համար: Կոմիտեի աշխատակիցները ևս բազմաթիվ լուսանկարներ էին անում: Ապա այդ բոլոր նյութերը Ամերիկյան նպաստամատույցը ցուցադրում էր դպրոցներում, եկեղեցիներում, հանրային տարբեր միջոցառումների ժամանակ և անգամ կինոթատրոններում՝

---

[31] *ՀՅԹԻ, թղթ. 104, - 551* ("This stamp buys a meal for a starving Armenian child")*:*

[32] *ՀՅԹԻ, - 784:*

[33] *ՀՅԹԻ, թղթ. 346, - 1371:*

[34] *ՀՅԹԻ, բ. 13, թղթ. 258, -1122:*

[35] J. L. B a r t o n. *Նշվ. աշխ., էջ 394.*

[36] The New Near East, Vol. V, № 9, May, 1920, p. 29.

մինչև հիմնական ֆիլմի սկսելը: Այս կարճ ֆիլմերն ու լուսանկարներն ունեին բավականին ազդեցիկ անվանումներ և խորագրեր, ինչպես «Ալիսան սովյալների աշխարհում», «Մի քիչ ավելի շատ մնացեք նրանց կողքին», «Մեծ նվաճում կամ Քեռի Ամերիկայի Ոսկի կանոնի երեխաները»[37] և այլն: Այս ժապավենները փոխարինեցին պատկերազարդված այն դասախոսություններին, որոնցից օգտվում էին նպաստամատույցի խոսնակները պատերազմի տարիներին, երբ դեռևս լուսանկարներ չունեին:

Ջեքի Քուգանը[38], որը մանուկ հասակում հոլիվուդյան աստղ էր դարձել, 1924 թ. ևս - մասնակցեց Ամերիկյան նպաստամատույցի քարոզարշավին՝ ընդգծելու համար այն հանգամանքը, թե որքան է ԱՄՆ-ն շահագրգռված Մերձավոր Արևելքի երեխաներին օգնելու գործում: Քարոզչական պաստառներից մեկում Քուգանը կոչ էր անում օգնել իրեն և բոյսկաուտներին Մերձավոր Արևելքի որբերի համար կաթ հասցնելու գործում: Կոմիտեի կողմից հայտարարվել էր կաթի շաբաթ և պաստառի վրա գրված էր. «Մեկ պուլիկ խտացրած կաթը կարող է մեկ կյանք փրկել»[39]: Այս քարոզչության արդյունքում հավաքված կաթը սկզբում փոխադրվեց Նյու Յորք, իսկ ապա իր իսկ՝ Քուգանի ուղեկցությամբ նավով հասցվեց Հունաստան: Այս «Երեխաների խաչակրաց արշավանքի» առաջնորդին տեղում դիմավորեցին որպես արքայի թե՛ կառավարությունը, թե՛ դպրոցականները և թե՛ հատկապես որբերը[40]: Հույն և ամերիկացի բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես նաև ավելի քան 7.000 որբերի ներկայությամբ Քուգանը Հունաստանի կառավարության կողմից պարգևատրվեց Սուրբ Գևորգի միաբանության արծաթյա աստղով՝ ի մեծարումն իր մարդասիրական աշխատանքի[41]: Ժապավենները, որոնցում նկարահանված էր Քուգանը և նրա այցելությունները զանազան որբանոցներ, մեծ տարածում գտան ԱՄՆ-ում և էլ ավելի նպաստեցին քարոզչության արդյունավետ իրականացմանը:

1923 թ. Չարլզ Վիքրին, որը Ամերիկյան նպաստամատույցի հոգաբարձուների խորհրդի անդամ էր, վերադարձավ Մերձավոր Արևելք կատարած իր տեսչական այցից և խիստ ազդված լինելով որբանոցների ու գաղթականների ճամբարների խղճուկ տեսարաններից՝ տարածաշրջանը բնորոշեց որպես «մահվան կողմից հետապնդվող երկիր»: Չ. Վիքրին առաջ քաշեց «Ոսկի կանոնի» կիրակի կազմակերպելու գաղափարը, որը շատ կարճ ժամանակում դարձավ Ամերիկյան նպաստամատույցի ամենաարդյունավետ նախաձեռնություններից մեկը:

Անմիջապես ստեղծվեց Ազգային «ոսկի կանոնի» կոմիտե, որը կանոնակարգելու էր նահանգներում միջոցառումների իրականացումը, իսկ տեղական առանձին ենթակոմիտեներն էլ զբաղվելու էին քարոզչական ակտիվ

---

[37] J. L. B a r t o n. *Նշվ. աշխ., էջ 391:*

[38] *Ջ. Քուգանը Չարլի Չապլինի կողմից նկարահանված առաջին երկարամետրաժ «Երեխան»(*"The Kid" *1921 թ.) համր ֆիլմի գլխավոր դերակատարն էր, իսկ 1922 թ. խաղում էր Չարլզ Դիկենսի «Օլիվեր Թվիսթ»վեպի հիման վրա հայտնի հոլիվուդյան ռեժիսոր Ֆրենկ Լլոյդի կողմից նկարահանված համանուն համր ֆիլմում՝ Օլիվերի դերում:*

[39] J. L. B a r t o n. *Նշվ. աշխ., էջ 391:*

[40] *Նույն տեղում, էջ 392:*

[41] The New Near East, April, 1925, p. 15.

աշխատանքով: Նաև ստեղծվեց Միջազգային «ոսկի կանոնի» կիրակիի կոմիտեն, որն էլ ավելի մեծ թափ տվեց քարոզչությանը:

Հաճախ գովազդային գործակալությունները, որևէ գումար չվերցնելով, կազմակերպում էին «Ոսկի կանոնի» միջոցառումների գովազդը: Այսպես՝ Նյու Յորքի Թայմս հրապարակում մեծ գովազդային ցուցանակի վրա տեղադրված էր «Ոսկե կանոնի» կիրակիի գովազդը: «Դուք հավատու՞մ եք Ոսկի կանոնին: Եթե այո, ապա մասնակցեք Ոսկի կանոնի կիրակիին դեկտեմբերի 5-ին: Ուղարկեք ձեր նվիրատվությունը Միջազգային Ոսկի կանոնի կիրակիի կոմիտեին Մերձավոր Արևելքի որբերի համար»[42]:

1923 թ. Ոսկի կանոնի կիրակիին մասնակցեց 14 պետություն, 1924 թ.՝ 23, իսկ 1925 թ.՝ 50 երկիր: Ինչպես Չ. Վիքրին էր ասում, այդ միջոցառումը հնարավորություն էր ընձեռում «հարուստներին ներկայացնելու աղքատների վիճակը, ուժեղներին՝ թույլերի, բախտավոր երեխաներին՝ դժբախտների կյանքը»[43]:

Տպագրվում էր հատուկ գրականություն «Ոսկի կանոնի» կիրակիների և նման այլ միջոցառումների կազմակերպումը պատշաճ իրականացնելու համար: Միջազգային «Ոսկի կանոնի» այս միջոցառումն ուներ անգամ իր հիմնը, որը կատարվում էր հազարավոր մասնակիցների կողմից թե՛ ԱՄՆ-ում, թե՛ Եվրոպայում[44]:

Ոսկի կանոնի կիրակին հիմնականում կազմակերպվում էր ճաշկերույթի ձևաչափով՝ երեք տարբերակով.

1. «Ոսկի կանոնի» ճաշկերույթ տանը,

2. «Ոսկի կանոնի» կիրակիի կազմակերպման և նախապատրաստման համար ճաշկերույթ,

3. «Ոսկի կանոնի» ճաշկերույթ եկեղեցիներում, վարժարաններում և համայնքներում:

Առաջինի դեպքում ամերիկյան տարբեր քաղաքներում բնակվող ընտանիքները տանը ճաշի ժամին կատարում էին «Ոսկի կանոնի» հիմնը և մատուցում հնարավորինս համեստ և հասարակ կերակրատեսակներ. որբերի ամենօրյա սննդի արժեքը կազմում էր շուրջ 5 ցենտ[45]: Իսկ իրենց ամենօրյա ճաշկերույթի համար նախատեսված գումարը փոխանցում էին Ամերիկյան նպաստամատույցին:

Երկրորդ տիպի միջոցառումը կազմակերպվում էր «Ոսկի կանոնի» կիրակիից առաջ՝ հիմնականում հոկտեմբերին, որի միջոցով մարդկանց շահագրգռում էին մասնակցել մարդասիրական այդ միջոցառմանը: Լավագույն հյուրանոցների ամենամեծ ընդունելությունների սրահներն այդ օրերին լի էին երևելի ամերիկացիներով, ովքեր օգտվում էին որբանոցներում ընդունված ճաշացուցակից: Այս մարդկանց թվին էին պատկանում ԱՄՆ նախագահ Քելվին Քուլիջը (1923–1929 թթ.), պետքարտուղար

---

[42] Ch. V. Vickrey. Golden Rule Sunday: Earthquakes and Orphans in Armenia; A Thanksgiving Season in America.– “The American Review of Reviews” 74, December, 1926, p. 592.

[43] *Նույն տեղում, էջ 594:*

[44] Ch. V. Vickrey. International Golden Rule Sunday, p. 70.

[45] *Նույն տեղում, էջ 108:*

Չարլզ Հաջիսը (1921–1925 թթ.), դատավորներ, տարբեր պարբերականների և թերթերի ներկայացուցիչներ, ինչպես՝ "The New York Times"*-ի խմբագիր Ջոն Ֆինլին, բազմաթիվ նահանգապետեր, սենատորներ, քաղաքապետեր գրեթե բոլոր նահանգներից: Այս միջոցառումների համար իրենց սրահներն անվճար տրամադրում էին ԱՄՆ-ի ամենահայտնի հյուրանոցները՝ Նյու Ուիլարդ հյուրանոցը Վաշինգտոնում, Բելվեդերը՝ Բալթիմորում, Ռուզվելտը՝ Նյու Յորքում և այլն*[46]*:*

«Ոսկի կանոնի» ճաշկերույթի երրորդ տեսակը կազմակերպվում էր հենց Ոսկի կանոնի կիրակիին՝ կիրակնօրյա պատարագից անմիջապես հետո: Եկեղեցիների ընդունարաններում և վարժարանների ճաշարանում կազմակերպված ճաշկերույթի ընթացքում ցուցադրվում էին լուսանկարներ, շարժանկարներ, որոնք ներկայացնում էին Մերձավոր Արևելքում տիրող իրադրությունը:

Գործում էր նաև «Ոսկի կանոնի» թեյախմության կազմակերպման տարբերակը: Այն հիմնականում կազմակերպում էին կանանց տարբեր ընկերակցություններ՝ Ամերիկյան նպաստամատույցի աշխատանքներին, Մերձավոր Արևելքի որբերի դրությանն անդրադառնալու նպատակով:

1924 թ. սեպտեմբերի 25-ին ԱՄՆ-ում հրավիրվեց առաջին «Ոսկի կանոնի» ճաշկերույթը Նյու Յորքում՝ Ռուզվելտ հյուրանոցում: Միջազգային «Ոսկի կանոնի» առաջին ճաշկերույթը, որ կազմակերպվեց Շվեյցարիայում՝ Ժնևում՝ Լես Բերգես հյուրանոցում, հրավիրել էր Փոլ Հիմանսը՝ Ազգերի լիգայի խորհրդի նախագահը, հյուրերն ավելի քան 20 երկրներից էին: Միջազգային «Ոսկի կանոնի» առաջին թեյախմությունը տեղի ունեցավ 1924 թ. օգոստոսի 10-ին Երուսաղեմում՝ ԱՄՆ-ի հյուպատոսության շենքի այգում, որին մասնակցում էին 18 ազգերի և 18 հոգևոր համայնքների ներկայացուցիչներ[47]*:*

«Ոսկի կանոնի» կիրակիներ կազմակերպվեցին ավելի քան 50 երկրներում, որոնց թվին էին պատկանում նաև այնպիսի երկրներ, ինչպիսիք էին Չինաստանը, Հնդկաստանը, Ճապոնիան, Նոր Զելանդիան և այլն: Այսպես. Ճապոնիայի արքայազն Տոկուգավան ոչ միայն անձնական դրամական ներդրում արեց՝ գումարի փոխանցման կտրոնին կից գեղեցիկ անձնական նամակով, այլև մասնակցում էր «Ոսկի կանոնի» կիրակիների վերաբերյալ գրականության տարածմանը Ճապոնիայի երևելիների շրջանում[48]*:*

1925 թ. ԱՄՆ տարբեր ծայրերում 8.000 ցուցանակների վրա Ամերիկյան նպաստամատույցի «Ոսկի կանոնի» կիրակիի միջոցառումների պաստառներն էին փակցված, որը կազմակերպել էր "Outdoor" *գովազդային ընկերակցությունը՝ առանց «Ոսկի կանոնի» ֆոնդերից որևէ գումար վերցնելու: Գովազդային պաստառները փակցվում էին պատուհաններին, մեքենաների վրա: Մեծ տարածում ունեին նաև բրոշյուրները: Պաստառները տարածվում էին 100.000 օրինակով*[49]*: Այս արշավին, ինչպես միշտ, ակտիվորեն մասնակցում էին նաև տեղական թերթերը:*

---

[46] *Նույն տեղում, էջ 110:*
[47] *Նույն տեղում, էջ 33:*
[48] *Նույն տեղում, էջ 56:*
[49] *Նույն տեղում, էջ 88:*

Սկսելով իր դրամահավաք քաղաքականությունը 1915 թ. հոկտեմբերից՝ արդեն նույն թվի դեկտեմբերի 31-ի տվյալներով Ամերիկյան նպաստամատույցը հավաքել էր 176.929 ԱՄՆ դոլար: Արդեն հաջորդ տարի կոմիտեն, ավելի հստակ պատկերացում կազմելով Մերձավոր Արևելքում տիրող իրադրության մասին, վերսկսեց հանգանակությունները և տարվող կանոնավոր քարոզչական քաղաքականության շնորհիվ հանգանակեց 2.404.000 ԱՄՆ դոլար: 1917 թ. նպաստամատույցը կրկնապատկեց նախորդ տարվա արդյունքը՝ հասցնելով գումարը 4.520.000 ԱՄՆ դոլարի, ինչը շարունակվեց նաև հաջորդ տարի[50]:

Այսպիսով՝ հիմնվելով որպես ժամանակավոր կոմիտե՝ Ամերիկյան նպաստամատույցը վերածվեց մի խոշոր կազմակերպության, որն ի սկզբանե իր առջև դնելով 100.000 ԱՄՆ դոլար հավաքելու նպատակ՝ գործունեության տասնհինգ տարիների ընթացքում (1915–1930 թթ.) 116.000.000 ԱՄՆ դոլարի ներդրում իրականացրեց գաղթականների և որբերի փրկության գործում: 132.000 որբեր ապաստան ստացան կոմիտեի կողմից կառուցված կամ հովանավորվող որբանոցներում[51]: Այս ծրագրերի համակարգված և արդյունավետ իրականացման գործում իր կարևոր տեղն ունեցավ Ամերիկյան նպաստամատույցի կազմակերպած քարոզչական քաղաքականությունը[52]:

ОСОБЕННОСТИ ГУМАНИТАРНО-ПРОПАГАНДИСТСКОЙ ПОЛИТИКИ КОМИТЕТА ПОМОЩИ БЛИЖНЕМУ ВОСТОКУ

(1915–1930 гг.)

АСЯ ДАРБИНЯН

Резюме

В годы Первой мировой войны был создан Американский комитет помощи Ближнему Востоку для содействия миллионам нуждающихся и предоставления им возможности для проживания. Работники Комитета развернули широкомасштабную пропагандистскую деятельность в США, в результате чего были собраны крупные пожервования. Пропаганда осуществлялась по нескольким основным направлениям: а. посредством речей, призывов и лекций государственных деятелей США, актеров, спортсменов, обращенных к общественности;

[50] J. L. Barton. *Նշվ. աշխ., էջ 411.*

[51] America and the Armenian Genocide of 1915, ed. by J.Winter, Cambridge, 2003, p. 195.

[52] *Ամերիկյան նպաստամատույցն իր մարդասիրական գործունեությունը շարունակեց մինչև 1929–1930 թվականները, երբ սպառվեցին ԱՄՆ Կոնգրեսի հատկացրած ժամկետն ու միջոցները: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մերձավոր Արևելքում դեռևս առկա էին բազմաթիվ չլուծված խնդիրներ, 1930 թ. փետրվարի 6-ին կայացած կազմակերպության խնամատարների հերթական տարեկան նիստին միաձայն որոշվեց ստեղծել մի նոր կառույց՝ Մերձավոր Արևելքի հիմնադրամը* (“Near East Foundation”), *որն իր մարդասիրական գործունեությունը շարունակում է մինչ մեր օրերը:*

б. посредством периодических изданий и газет, в которых представлялась ситуация на Ближнем Востоке и необходимость экстренной помощи; в. посредством пропагандистских постеров, почтовых марок и фильмов, содержание которых менялось вместе с событиями, развивающимися на Ближнем Востоке; г. посредством воскресных мероприятий «Золотого правила»: званые обеды и чаепития по случаю праздника Святого Рождества.

PECULIARITIES OF PUBLICITY CAMPAIGNS OF NEAR EAST RELIEF COMMITTEE (1915–1930)

ASYA DARBINYAN

S u m m a r y

The American Near East Relief was founded as a relief committee during World War I to help millions of people in need in Near East and save their lives. The organization spearheaded a nation-wide campaign and contributed sufficient funds to carry on an adequate relief program overseas. The publicity campaign of the Near East Relief was accomplished using the following techniques: a. Public speeches and appeals: US government representatives, famous performers, sportsmen, and actors encouraged Americans to show generosity and support the relief project; b. Newspapers, magazines and periodicals: the special articles informed public about the relief work in Near East and the problem of urgent need; c. visual publicity: the campaign story was told in the simple form of display posters, car card or outdoor advertising with slogans changing according to conditions in Near East; d. Golden Rule Sunday: this campaign program for the Christmas season was initiated to organize Golden Rule luncheons, dinners and teas.